ԼՈՒՐԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հունվարի 5-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կալկաթայի եկեղեցական խորհրդի հրավերով և հնդկահայոց հոգևոր հովիվ, Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի նախաձեռնությամբ Ս. Ծննդյան տոնին մասնակցելու համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հնդկաստան ժամանած Տ. Իգնատիոս վրդ. Մալխասյանը: Օրվա սուրբգրային ընթերցվածները կարդացին Մարդասիրական ճեմարանի սաները: Ս. Պատարագի ընթացքում ներկա բոլոր հավատացյալները Ս. Հաղորդություն ստացան:

Ս. Պատարագին ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

Արարողությունից հետո եկեղեցական խորհրդի անդամները և ճեմարանականները շարժվեցին Մարդասիրական ճեմարան, ուր, հանդիսապետությամբ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի, կատարվեց տնօրհնեք, տրվեց Ս. Ծննդյան զատկական ընթրիք:

Հունվարի 6-ին կրկին բազմամարդ էր Ս. Նազարեթ հայկական եկեղեցին: Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով Ս. Պատարագ մատուցեց Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հընթացս Սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Փրկչի Ս. Ծննդյան խորհրդի նշանակությանը յուրաքանչյուր հայորդու կյանքում:

«Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդյան խորհրդի ճշմարիտ գիտակցությամբ են ապրել մեր նախնիք դարերի ընթացքում, որի ակնհայտ վկայությունն են նաև այս հոյակերտ եկեղեցին և Դո՛ւք, սիրելի՛ հնդկահայեր, որ Ձեր հայացքը միշտ հառած եք ունեցել Հայոց Բեթղեհեմին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ Ձեր առաքինի գործերով և կենցաղավարությամբ բարձր պահելով հայ քրիստոնյայի անունը Մայր Հայրենիքից այդքան հեռու: Ուստի, որպես հնդկահայոց հոգևոր հովիվ՝ պատգամս է, որ այսօր ամեն մեկիս սրտում և հոգում կրկին ծնվի Հրաշամանուկ մեր Տերը՝ ամենքիս պարգևելով խաղաղություն, երջանկություն և ամենակարևորը՝ միասնականության ոգի»,- նշեց Օշական վարդապետը:

Այնուհետև, ի նշան Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտության, կատարվեց Ջրօրհնեք, և օրհնված ջուրը բաժանվեց ներկաներին: Ջրօրհնեքի խաչքավորն էր Մարդասիրական ճեմարանի սան Արթին Սաֆարյանը:

Արարողությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները և հյուրեր: